

Գրոց և աշխարհիկ լեզուի տիրապետութեան խնդիրը շատունց արդէն
վիրջացած է. Այլ ևս չեն գտնում՝ նոր լեզուի դէմ մաքառողներ և հին
լեզուն անպայման արհամարհողներ. Եթէ գտնում են զես՝ 10 դ կամ
20 դ անգամ՝ Sholem) կոմ մի ուրիշ՝ ճապաղ փիլիսոփայական կամ
բարոյագիտական գիրը գրաբառ թարգմանողներ. այդ էլ բացառութիւն
պէտք է համարել և անքան գրական դրուսնք. Ամենքն էլ ընդու-
նում են արդէն, որ գրաբառի ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է ոչ մի-
այն կրօնական գիտութեանց և պաշտօնեութեան համար, այլ մանաւանդ
նոր լեզուի մշակման ստորելու գիտաորութեամբ. Սիւս կողմից նոր լե-
զուն սրբագետում՝ էթէ գպրոցական դասաւանդութեան և թէ գրակա-
նութեան բոլոր ճիւղերում. Այսու հանդերձ, պէտք է խոստովանիլ, որ
գժբաղդաբար եթէ միջնակարգ գոլլոցներու թոյլ է ընթանում գրա-
բառի ուսումնասիրութիւնը, աշխարհաբառի համար էլ, շատ անգամ. ոչ
միայն ձեռնահահաս ուսուցիչներ շկան, այլ ամախ նաև այդ կարեորագոյն
առարկայի համար դասեր չեն նշանակուած. Իսկ զատառական բարբառների

տառմեասիրութիւնը որ անոլոցիման Հարկաւոր է բարձրագոյն պասարաններում¹), բոլորովին մոտացութեան է արտօնութիւնը ըստորից ուղղակի հետեւամ և թէ ինչ վիճակումն է լինելու ժեր նոր լեզուն. Համբակ թարգմանիչներ, Եղուակ ոչեւ մատենակիրներ միջամտութիւն են. իսկ քիչ թէ շատ մաքուր և առաջ գրողները այնչափ սակաւ աթիւ, որ իսկապէս ճրագով պէտք է մինտուել, այս է Տառապաց Խոյա ընաց Պատաշանը նշանած առաջ Այս մեծ գժրապատութեան միակ դարմանը, ամենքն էլ սմեն որ կրկնում են, որ գրականութեան ասպարիզում՝ Քննադ առութիւնն է լինելու, իսկ ասունարաններում՝ լեզուի գասաւդութութեան վրայ լուրջ ուշադրութիւն դարձնելը. Սակայն զործով այդ չենք տեսնում. Սիսլը և անձաշակը կրկնուելով հաստատում է և ներս սպրոյն մ' զորոցի մէջ, սպառնալով վարակի ամբողջապէս մանկահաս աշխարհիկ լեզուն, որ էսկազէս մէտի ֆրանչան է ալի ընդուռոյն շաբաթացան:

Քննադատութեան և ճշգրիտ հայեցակետի պակասութիւնն է որ մինչեւ
այսօր էլ տեսամեն արևմտեան և արևելյեան գրական բարբառները՝ շարունա-
կի լով ուրոյն գոյութիւն և սպառնալով զուցե յարատեել այդ ուղղութեամբ։
Արշավի էլ որ լեզուն գործարանառ մարմին լինելով՝ լինական օրինաց
համեմատ աճի, այսու ամենայնիւ պէտք չէ ուրանալ որ կամքը, այս կամ
այն ուղղութիւնը կամ տեսակետը կարող են աղփեցնել ունենալ նորս
աճելութեան և զարդարցման վրայ։ Եթէ այսպէս բարձի թողի անենք մեր
երկու գրականական լեզուն յաւբենեանս էլ չեն միանալու. և փոխանակ
մէկի, ստիպուած ենք լինելու երկու անդաման մշակել, բարձրացնելով
աչագին ոյատ, մեր ժողովրդի երկու մասնիք մէջ։

Սիր կարծիքով՝ արեւլհանքարրտի և մաս մասնիկը միայն (խօսութեան բառ, ուստա՞ր եմ) բաւական կլինէր միութեան զործը զԼու բերելու, մնացեալը թողնելով ապագային և քննողատութեան :

Յարեւանի բարբառով կրօղները աւելի հսկուած են, բառերի ճոխութեամբ,
գեղեցիկ բարդութեանելով, լեզուի կոկութեամբ (ֆրանսերէնից թարգ-
մանութիւններ), բայց դժբաղդաբար նոցա շինութեան հիմքը խախուած է:
Նոցա լեզուն, ըստ մեզ, նման է մի ճարտարապետական շինուածքի, որ ան-
հաստատ հիման վրայ է դրուած, բայց զարդարուն է պրոագներով. Մինչդեռ
արևելեան բարեւալը դրուած է հաստատուն—Ժալովով ական կենդանի բար-
բառի, հիմքի վիրայ։ Ըստ անդամ կոշտ և կոպիչու, աղքատ բառերով.

(1) Անդ . Մասն ինեւանի ընթերցաբաններում՝ գտնած ական քարքառներով յօդ-
ուածներ են գրուած ստորին գտաբանների Համար՝ որ եւ բոլորովին անսպասու-
ի մինչեւ իսկ վնասակար ոլէոք Համարեւ . Առաջին տարուայ առաջին հետակելով
անդական քարքառի վրայ . իսկոյն եւ եթ ոլէոք անցնի նոր Կրտկանական Եղանակ .
որին եւ ոլէոք Հետեւի . մի երկու տարի յեւայ . գրորառը . իսկ այլ եւ այլ գտ-
աբաններով ական քարքառների ուսումնասիցութեանը՝ Ավայն բարձր գտաբաններին է վե-
րասական քարքառների ուսումնասիցութեանը :

անտեղեակ գրոց ճոխ լեզուին և կարօտ մշակման։ Սակայն պարզ, զորեղ հոլովումներից յաջողապէս ազատուած և միօրինակութեան մօտեցած։ Քողովին անկախ դրաբառից, որի բառերը գործածելը, նուա ամբողջ ոճերը, ոչ միայն չէ մնասում՝ իւր ազատութեան, այլ և մի նոր ուժ աւելացնում։ Մինչդեռ արևմտեան բարբառում, ըստ հնացեալ վարդապետութեան, գրաբառի մօտենալը համարւումէ չափ, որով շափւում է լեզուի գեղեցկութիւնը և գրութիւնը գրաբառում՝ «երգեմք, ասեմք» ինչի։ որովհետեւ գրաբառում այդպէս է, «Այս մենայն իշեմ իշղոնց է մենց») —որով և ստացւում է ոչ ժողովրդական և ոչ գրոց լեզու, այլ աղջատ և անճաշտկ մի խառնուրդ։ «Խոհանոցի գրաբառ» ասում են Եւրոպայիք։ Այս իսկ է պատճառը, որ նոր լեզուի մշակման ասպարիզում մենք պէտքէ ձեռք լուանանք և ոչինչ չսպասենք այդ անճաշտկ գրաբառեաններից, որոնք ընդունելով հանդերձ աշխարհաբառի օրինաւորութիւնը՝ գրելով աշխարհաբառ։ յամառում են սակայն բոնազրոս ձեւեր և ոճեր մոցնել նոր լեզուի մէջ, այսպէս ասած, «Նորան բարձրացնել» կամենալով։

Այդ բարձրացնելու փորձը շատ անգամ կատարուել է, և ես եւ կը կ—մ տարի երջանկայիշատակ Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այլազեանի առաջնորդութեամբ ենթարկուել եմ այդ փորձին, առօրեայ խօսեցութիւնն անգամ գրաբառի փոխելով, որի միակ հետեանքն է եղել գրաբառ սովորելը, բայց և աշխարհաբառի տգիտութիւնը։ Դեռ այս էլ կայ, որ Հանգուցեալը, ինչպէս հին, նոյնպէս և նոր լեզուի մէջ պարագլուխ էր, վկայ նրա Առիլովի հիանալի թարգմանութիւնը։ Մինչդեռ արևմտեան այժմեան գրողների մեծ մասը բորիկ են երկուսիցն էլ։ Ուստի և նոցա գրաբառի գիտութիւնը յանգում է մի քանի «մեների» մի քանի «զայերի» հոլովների և նախդիրների։

Գալով մեզ, արևելեաններիս, մեզ փրկում է մեր լեզուի կազմուածքը, որ գարերից ի վեր մշակուել է ժողովրդից։ բայց մեր տգիտութիւնը և գրաբառի անընդելութիւնն էլ անչափ է, որի և հետեանքն է այժմեան մեր գրողների և թարգմանիչների մեծամասնութեան լեզուի նոեմութիւնը, աններելի սխալները, բառերի աղքատութիւնը և նոցա անտեղի գործածութիւնը։

Այսպէս որ՝ ինչպէս արևմտեաններին հարկաւոր է աւելի ժողովրդական հոգւով ներշնչուիլ և լեզուի հիմնավայր ընդունել գաւառները, արևելեաններիս էլ անհրաժեշտ է ի մօտոյ ծանօթանալ հին լեզուին, որից և նորի պակասութիւնները լցուցանել։ Հենց այս ուղղութեամբ, մեզ թւումէ թէ, առաջնորդում է պ. Փիլիպ. Վարդանեան, իւր թարգմանութեանց մէջ, որ և արժանի են լուրջ ուշադրութեան։

(1) Այս եւ նման նախադասութիւններ, անձունի լեզուով գրուած ամբողջ գրքեր, արեւմտեան գրականութեան մէջ, սյնչափ բազմաթիւ են, որ օրինակներ մէլ ըհլելն անգամ աւելուրդաբանութիւն է։

Արդոյ պարոնը հակառակ արևելեան գրողների մեծամասնութեան, փորձ է փորձում իւր թարգմանութեանց մէջ, չհեռանալով հանդերձ աշխարհիկ լեզուի ոգուց և ընդհանուր կազմածից, օգտուիլ գրարառի ճոխութիւնից, ներմուծելով նոր լեզուի մէջ բազմաթիւ բառեր և ոճեր, որոնք շատունց գործածութիւնից դադարած են և ընթերցողների մեծագոյն մեծամասնութեան անծանօթ.

Թէ Պ. Ա. արդանեանցին որչափ է յաջողել այդ օգտակար կործը և թէ ինչ հետեանք պէտք է սպասել այդ ուղղութիւնից՝ հենց այս յօդուածի նպատակն է այդ ցոյց տալ.

Մեր վերև ասածից պարզուեցաւ արդէն թէ ինչ հայեցակետ ունիմ ևս նոր լեզուի և նորա զարգացման ճանապարհների վրայօք, թէ պէտ աւելի կարողներին պէտք է վերապահել լեզուի քննադատութեան ծանր խնդիրը, բայց որովհետեւ ոչ ոք ասպարեզ չէ գալիս, ուրեմն և թող ներուի ինձ ձեռնամուխ լինել մի գործի, որի անհրաժեշտութիւնը ամենքին զգալի է.

Եթէ քննադատութեան նկատողութիւնները առաջնորդուին անկողմնապահ հոգւով, միշտ օգտակար են. լինին թէ կուղ ծուռ և սխալ, Սիսալը հերթումէ և ուղիղն երեան գալիս։ Առաջնորդուելով այս համոզմամբ, բաց ենք անում մենք «Արարատի» մէջ մի նոր էջ. «Աշխարհիկ լեզու և քննադատութիւն» վերնադրով, ուր և մտադիր ենք զբաղուել միշտ նոր գրքերով, քննելով նոցա լեզուն, գործածած բառերն ու ոճերը. Եթէ համարձակում ենք մեր համեստ կարծիքները տպագրութեան յանձնել, այդ գլխաւորապէս այն յուսովն է, որ աւելի հմտաները իրենցը շղանան։

Այսօր իբրև նիւթ ընտրում ենք պ. Ա. արդանեանի «Հոմերի Կլիականը» արձակ պատմուած Ֆերդինանդ Շմիդթից. թարգմանութիւն Գերմաներէնից (Թիֆլիս 1886), թուղթը, տիպը, վրիպակների սակաւութիւնը կարող են օրինակելի համարուել. Յովհաննէս Մարտիրոսեանի տպարանը, ուր և տպագրուած է այդ աշխատութիւնը, յայտնի է արդէն իւր մաքոր և գեղեցիկ հրատարակութիւններով։

Ընթերցող հասարակութեան ճաշակը ազնուացնելու և դասական գրուածոց ընթերցանութեան նախապատրաստելու համար ուղիղ ճանապարհը գտել է պ. Փիլիպոս Ա. արդանեան, որի համար և մեծ գովասանութեան արժանի է. Պարսնի բոլոր թարգմանութեանց մէջ մարդ տեսնումէ ա) ջանք, արժանի է, Պարսնի բոլոր թարգմանութեանց մէջ մարդ տեսնումէ ա) ջանք, թարգմանչի կողմից, ընտիր նիւթ ընտրելու թարգմանութեան համար, թարգմանչի կողմից, ընտիր նիւթ ընտրելու թարգմանութեան համար, բառերի և ոճերի աղքատութեամբ զրուածքի միտքը չաղքատացնել, ինչպառերի և ոճերի աղքատութեամբ զրուածքի միտքը չաղքատացնել, ինչպէս թարգմանիչների մեծամասնութիւնն անումէ, նսեմացնելով բնագրի նրբութիւնները։

Ասենք թէ՝ Շմիդթի պատմածը լաւ հայացնելուն մեծապէս նպաստել են նաև մեր ունեցած գրաբառ հոմերականները, որից և մեծապէս օգտուել է պ. թարգմանիչը. Բայց թերեւս այդ իսկ պատճառով, Գլուխովի ԴՐԵՅՎ-

Ռիւնը շոէսպանց շնորհած մէջ առաջ առաջ ծայրայշը նետեալ հանում, ունշուն է գուստ է քեզչոյն-նետ և կոչո-նետ:

Սակայն թէ այս և թէ այն բոլոր մանր ու մունք պակասութիւնները, որոնց մատնանիշ ենք լինելու, շատ հեշտութեամբ կարող են շփտկուիլ: Թարգմանչի գեղեցիկ լեզուին հետ ծանօթացնելու համար, մասնաւորապէս այն ընթերցողներին, որոնք գեռ չեն կարդացել յիշեալ աշխատութիւնը, դնումներ այստեղ մի քանի հատուած: յուսալով շարժել նոցա հետաքըրքը թիւնը ամբողջ գրուածքը կարդալու:

«Տրոյացիք մի յաղթական և հզօր ազգ էին: Հին ժամանակներում նրանց վրայ իշխում էր աստուածներից սիրուած իմաստուն և հզօր թագաւորն Պրիամոս:

Մի գիշեր չարագուշակ երազ է տեսնում նրա կինը. իրը թէ նա ծնում է մի մեծ հրդեհ, որից ամբողջ Տրոյան այրվում է: Կրակներն ամեն կողմց բորբոքուելով բարձրանում են դեպի երկինք, և հօյակապ քաղաքը դառնում է մոխիր և աւերակ:

Սարսափեցաւ այդ երազից Պրիամոս և պատմեց Եղակոսին, որ իւր երազահան որդին էր: Որդին ասաց. «Թագուհին կը ծնէ մի զաւակ, որին սահմանուած կը լինի կործանիչ գտոնալ իւր հայրեննեաց:» (եր. 3)

«Յառաջ քան թէ Ագամեմնոն մի խօսք հանեց բերանից, Կիրիկէնիան նրա գիրկն ընկաւ և ասաց. «Ո՞չ եթէ ես կարանայի, Որդիկոսի նման, ձայնովս քարեր կակղացնել, այն ժամանակ կը փորձէի շրջել մտքերդ այդ սոսկալի նպատակից: Սակայն թշուառս արտասուքից զատ ոչինչ չունիմ, որ ինձ համար խօսէին: Ոչ, հայր իմ, ինայի՛ր կեանքիս արևն և մի տար ինձ այն աշխարհն իջնելու, որ ծածկուած է ստորեռնում: Յիշեր, ինչպէս գեռ մանուկ գոլովս փարվում էի ծունկերիդ, ինչպէս գու վերցնում էիր ինձ գրկիդ մէջ, և ես առաջին անգամ քեզ հայրիկ էի անուանում: Քո և մօրս սիրով սնայ ես և աճեցայ: Քանի՛ անգամ հարցրել ես ինձ. Պստրիկ, երբ կը լինի, որ տեսնէի քեզ երջանիկ կին՝ մարդու գնացած, բախտաւոր: Այն ժամանակ ես մտածում էի, արդեօք ինչպէս կընդունէի, կըսկատուէի ծերունի հօրս իմ սեփական յարկի տակ, և ահա այսպիսի բաներ էինք խօսում ապագայի վերաբերմամբ: Եւ արդ դո՞ւ ես ուզում մահուան մատնել զաւակիդ: 2Եւ,—չես կարող այդ անել. չես էլ կարող մի այդպիսի վիշտ հասցնել մայրիկիս, որ ծնել է ինձ ցաւերի մէջ: Ո՞չ հայրիկ, մի սոսկալի բան է մահը, քաղցր է տեսնել արեի լոյսը:» (եր. 25)

«Հէնց որ քարոզները հեռացան, Աքիլ թողաւ իւր վրանն և մեկուսանալով բանակից, գնաց նստաւ ծովափի վրայ: Արտասուքը հեղեղի պէս ոռոգում էին նրա աչքերն, և նա լաց լինելով աղաչոնք էր արձակում առ գիցուհի մայրն Թէտիս: Եւ ահա կապոյտ ալիքներից մի շամանդաղ բարձրացաւ, և

զուրս ելաւ ծովի չքնաղ դիցուհին։ Արծաթափայլ թեթև թաթերն աւազի
վրայ դնելով, ընտելաբար նստաւ նա իւր սիրասուն որդեկի մօտ և գորովա-
կան հարցմունք արաւ, թէ ի՞նչ էր նրա տրտմութեան պատճառը։

Դառնապէս յոգւց հանեց Արիլլես և պատմեց Ազամիմնոնի հետ ունեցած շարք ժժութեան հանգամանքը։ (Եր. 45)

Այս ասկելիս Արամաղդ կապոյտ յօնիքերով յօժարութեան նշան տուաւ
ծովի սիրուն դիցուհուն։ Այդ նշանից աստուածոյին զլիսի վարսերն զէպի
յառաջ շարժուեցան և Ոլիմպոսի գագաթները դղրդուեցան։

Այնուհետև Թէտիս՝ մի աստղի նման՝ սրտազո՞չ վայր սլացաւ Ոլիմպոսի
բարձունքից դէպի ծովի անդունքը, իսկ Արամազդ գնաց մտաւ իւր ապա-
բանքը, և բոլոր աստուածներն երկիւղով ոտքի ելան նրա առջեւ Հէնց որ
նա իւր ոսկեփայլ գահը նստաւ, Հերան կանգնեց նրա հանդէպ և դառնա-
պէս կշտամբեց, թէ նա ծածուկ խորհուրդ էր տեսել մէկի հետ:

Արամազդ նրան պատասխանեց. «Թէպէտ և իմ կիւն ես դու, բայց և
այնպէս շատ կը լինի, եթէ ամեն վՃիռներս գիտենա»:

Հերան ասաց. «Անշուշտ Թէտիս խաբած կը լինի քեզ մի բանով! Ես հօ-
տեսայ Նրա դալն առաւօտեան աղջամկջին, Նրա փարուիլը քո ծնկերից:
Հարկաւ դու խօսք տուիր Նրան՝ կործանելու յոյներին և պատուելու Արելին».

Քարեացաւ Արամազդ և ասաց. «Այ թշուառ դու, միշտ կասկած
ծիք ունիս իմ մասին, թէև ինձ ոչինչ անել չես կարող» (ԵՊ. 48)

« Այնուհետև զոհարերութեան դիմեցին. Քարոզները ձեռնալուայի ջուր
մատուցին իշխաններին. Ագամեմնոն դանակն առաւ, զառների գլխից մա-
կեր կտրեց, այդ մազերն իշխանների մէջ բաժանեց և ապա թէ այսպիսի
աղօթք արաւ բազկատարած. »

Արամազդկ հոյր, Հքեղդ և վեհաւետ, և դու, արեգակն ամենատես,
Արամազդկ հոյր, Հքեղդ և վեհաւետ, և դու, արեգակն ամենատես,
ամենապէտ. և դուք, զետեր, և դու, երկիր, որ սլատու հասում էք
երկ ժնաղանց վատերին. վկայ եղէք Ժեղ և սլահեցէք մեր այս անսուտ եր-
բումը. (Եր. 61)

եւ կոիւ։ Դու մօրիցգ ես ժառանդել այդ անողոք և բուռն ոգին։ Հերան էլ չէ կարանում մի օր անդամ խաղաղ մնալ։ Եթէ որդիս շլինեիր, եսքեզ վաղուց գլորած կլինեի երկնքից։ (Եր. 84)։

—

* Վարդամատ այդն բացուելուն պէս՝ երկու զօրքն էլ ճակատելու պատրաստուեցան։ Փայլակնացոյտ պղնձով պատեց իրեն Ազամեմնոն։ ոտքերին հագաւ արծաթէ Ճարմանդներով զօդուած սոնապաններ, կուրծքը ծածկեց լանջապանակով, որի վրայ քսան հատ փայլուն ծիլեր կային պողովատից և զուտ ոսկուց։ Պարանոցի առջեից և ետեից կախուած էին ծիածանի կամարի պէս բազմերանդ վիշապներ։ Ուսին ձդեց ոսկեհուռ կապարանի վրայ հաստատուած մի սուսեր։ ղրա պատեանն արծաթից էր, երախակալն՝ ոսկեկուռ թևեռներով զարդարուն։ Յետոյ վերցրեց իւր հաստաբեստ վահանն որ գրեթէ լիովին ծածկում էր նրան։ Տառն պղնձի շրջան ունէր այդ վահանն և քսան սպիտակ պորտ, միջինը թխագոյն պողովատից։ Վահանի շուրջն պատում էր դժնեհայեաց Գորգոնը, որի գլխին հրացայտ աչքով օներ էին փաթաթուած։ Գլխին դրաւ ոսկեծոյլ, ահեղածօճ զարդմանակով քառախորան սաղաւարտը, յետոյ վերցրեց իւր ամրակուռ զեղարդներն, որոնց պղնձի սլաքները մինչև երկինք էին փայլատակում, և տպա թէ սիդաճեմ դուրս դնաց արքայական վրանից։ Հերան և Աթենաս ահեղաշուք թագուռորին որ տեսան, ի պատիւ նրա՝ ուժգնադորդ որոտ տուին երկնքից վայր։

Վեհապետի վսիմ տեսքն և Ողիսես և Դիոմեդ դիւցազների խիզախ գործն այնպիսի եռանդ ազդեցին յոյներին, որ նրանք նորից մարտ մղելու աշխոյժ ստացան։ (Եր. 131)։

—

* Վայ ինձ, որ անհնարին դառնութեան բօթ պիտի յայտնեմ քեզ, ո՞չ սքանչելիդ Աքիլլես։ Քո սրտակից լնկերն Պատրոկլ պատերազմի դաշտում լնկաւ։ Հեկտոր նրա զէնքերը կողոպտեց, և ոյժմ մի ամեհի մարտ է մղղվում նրա մերկացած մարմնի շուրջը։

Աքիլլես հէնց որ լսեց այս զոյժը երեսի վրայ գետին ընկաւ։ Դառնակսկիծ սրտի ցաւն ոյնպէս նրան փոթորկեց, որ նա սկսաւ խելագարի նման ինքն իւր դէմ մոլեգնիւ և մազերը փետփետել։ Աղախինները դուրս վազեցին և երբ տեսան, որ իշխանը գետնի վրայ թաւալվում էր, և իմացան, որ նրա սիրելի լնկերը չար մահուան զոհ էր եղել։ բարձր ողբով Ճիշ վերցրին։ Յունաստանի ամենամեծ դիւցազնի գետնատարած հառաչելն և ուժգին ցաւից բոլոր մարմնով գլրդուիլը մի սոսկալի պատկեր էր։ (Եր. 156)։

—

* Հայրը կամինում էր զգուել մանկան։ բայց Անդրոմաքէն բռնեց նրան և ասաց, սիրուն աչքերն արտասուալիր.

Ազ տարօրինակ մարդ, քաջութիւնդ քեզ անշուշտ սպանելու է։ Գէթ այսօր յետ կաց մարտից և դժմա դողտըիկ մանկանդ և չարաբաստիկ ա-

մուսնից : Աւ իս , ես շուտով այրի կըդառնամ . թշուառու : Եթէ ես քեզնից
զբկուիմ . լաւ է , որ սև հող մտնեմ . քանզի ինձ միայն վիշտ և դառն ցաւ
պիտի մնայ , ոչ թէ սփոփիանք . Ոչ մեծարոյ հայր ունիմ ես , ոչ էլ մայրիկ
գթասէր . Հօրս և եօթն եղբայրներիս Աքիլ սպանեց , և այժմ . Հեկտոր .
գու ես միայն ինձ հայր և մայր և եղբայր :

Աիրելի՛ կին», պատասխանեց նրան Հեկտոր. «Խօռքիրդ սիրտս կեղեքում
են. բայց և այնպէս չեմ կարող ես յետ կենալ ճակատից. Քաղաքիս փրբ-
կութիւնը, հօրս փառքն և իմ յատուկ պարծանքը պահանջում են. որ ես
կոռիիմ. Այս՝ ես էլ զգում եմ հոգուս խորքում—կըդայ մի օր, և սուրբ
Տրոյան կըկորչի, կըկորչի և Պրիամոս իւր կորովատէդ ազգերով. Այսու-
հանդերձ մեր քաղաքին, մեր տոհմին և մեր ազգին հասանելիք աղէտներն
այնքան չեն ցաւեցնում իմ սիրտը, ինչքան որ քեզ սպառնացող ապագան.
ով կաթոգին ամուսին. Ա'վ գիտէ, Թշնամիներն մեզ որ յաղթեն, գուցէ
մի զոռոզ յոյն քեզ զերի կըտանէ, և գու, իրրե ստրուկ, ոստայն կըմանես
նրա կնոջ համար և զուր կըբերես հեռաւոր աղբիւրներից. Եւ մարդիկ՝ քեզ
արտասուաթոր տեսնելիս՝ կասեն. Բա՛, սա Հեկտորի՝ տրոյացւոց քաջ դիւ-
ցաղնի ամուսինն էր, մեծարուած ամենքից. Քանի որ կանգուն էին Տրոյացի-
պաշտպանները. Ո՛չ, լու է հողակոյտն ինձ ծածկէ, քան թէ լսեմ հեծե-
ծանքդ և աչքովս տեսնեմ օտարի ձեռք դերի ընկնելդ.»

Այսպէս իրակ դիմակն և գարձաւ իւր որդեկին գրկելու. Սակայն մա-
նուկը ճիշ հանելով թաք կացաւ իւր դայեակի ծոցի մէջ, սլատճառը զար-
հուրեցաւ հօր ձիադէս զարդ մանակից. որ ճօճվում էր սաղաւարտի զադա-
խին. Հայրն և մայրն այդ բանի վրոյ ժպանեցան. Հեկտոր հանեց դիմից ճա-
ճանչաւէտ սաղաւարտն և վայր դրաւ. Խնդաց մանուկն այն ժամանակ և
մեկնեց նրան թաթիկները. իսկ հայրը. նրան գրկելով և ճօճելով այսպէս
աղօթք վերառ աքից աստուածներին.

բարձր պարագաներ աստուածներ, ոռուէք որ որդեակա էլ իւր հօր պէս միշտ
«Ով ըարեց ութ աստուածներ, ոռուէք որ որդեակա էլ իւր հօր պէս միշտ
բարւոյն ձգտող լինի և իւր աղջին պաշտպան դառնայ թշնամու դէմ»:
բարւոյն ձգտող լինի և իւր աղջին պաշտպան դառնայ թշնամու դէմ»:
Այս, չնորհեցէք սրան առաւել մեծ զօրութիւն, որպէս զի մոյրը ինողայ
քաջի վրայ և մարդիկ էլ մի օր ասեն—որդին հօրիցն էլ կտրի՛ջէ»: (Եր. 18:2):

« Արելիս անհրկիւղ պատասխանեց, « Զեռքս արոյացիներին կոտորելուց
հանգչելու չէ, մինչև որ Հեկտորի զօրութիւնն էլ շըմփոքեմ»:
Ասաց, և զհտի մեջ տեղն յարձակուեցաւ, Ահեղ զետն այն ժամանակ
մի ցուլի պէս մննչելով պղտորուեցաւ և ալիասատ որոտաց, Նոյն բոպէին
խոսվայոյզ կոհակներն Արելի շուրջն զիզացան, և նա կորցրեց ոտնկայքը:
Նա պինդ բոնից նշգարենուց, ու կախուած էր դարեւանդից, սակայն ծառն
ապահով պահը ընկաւ և բոլոր գետը կամրջեց, Վըլլ արագ վերև թռաւ-
արմատախիլ ջուրն ընկաւ և բոլոր գետը կամրջեց, Վըլլ արագ վերև թռաւ-
ափին հասնելու ջանաղիք: Բայց փրփրագէղ ալիքները շարունակ կուտակ-
վում էին և լեռնանում: Այն ժամանակ Արելիս աղերս կարգաց առ-
տուածներին, որ փրկին իրեն անփառունակ կորուստից: Հերան լուց նրա

աղերսին և հրաման տուաւ Հեփեստոսին՝ սանձել զետի մոլեգնութիւնը։ Նոյն ժամայն գետեզրի վրայ արփիահրատ հուր բարձրացաւ, և բոցերի ճարակ դարձան ափի մօտ բուսած նշտարիք, մոշենիք, ներգիւնն, կնիւն և ուռենիք։ Գետի աստուածն, ոյս հրահոսան հրլեհչից տագնապած և տոշորուած, զթութիւն հայցել սկսաւ, Հերան լսեց և շատացաւ Աքիլլեսին ազատելով։ (Եր. 192)։

«Երբ ընթրիքն վերջացաւ, Աքիլլես տրտում տրտում ելաւ վրանից և և գնաց բազմագոշ ծովի եղերքը։ Գիշերն արդէն վրայ էր հասել. նա յօդնած հոգւով և մաքմնով, մաքոր գետնի վրայ պառկեց, և աչքերն իսկոյն անոյշ քնով գոցուեցան։

Արշակուսին նրան երազում երեեցաւ մի պատկեր, որ թէ ձայնով և թէ դէմքով նման էր Պատրոկլէսին։ Պատկերը նրան մօտեցաւ և ասաց.

«Ննջում ես, Աքիլլես, և արդէն ինձ մոսացել ես. Սակայն որչափ էիր ինձ սիրում կենդանեօքս։ Ընկեր իմ, շուտ արա, մի գերեզման պատրաստիր ինձ, որ լայնագուռն գժոխիքն իջնիմ։ Մեռելների ուրուները մերժում են ինձ, թոյլ չեն տալիս, որ գետին մտնեմ. և այսպէս ես վայրայած թափառում եմ։ Ե'կ հրաժեշտի աջ տուր ինձ, քանզի հէնց որ կրակի մատնուիմ, էլ գժոխիքից յետ չեմ գալ։ Է'լ երբէք ընկերներից մեկուսի չենք նստիլ մենք, միասին մտերմարար խօսակցելով։ Դժնի օրհասն ինձ մահուան անդունդի մէջ զլորեց. քեզ էլ, ո՞վ Աքիլլես, վիճակուած է տրոյական պարսպի մօտ մահ գտնել. Մի ուրիշ բան էլ պիտի ասեմ քեզ, սիրելին։ Պատուիրիր, որ իմ աճիւնը քոյինից զատ չըդրուի։ Ենչպէս որ անտիական հասակից անբաժան էինք իրարուց, այնպէս էլ միը ոսկորները թող միասին ամիսուիրին այն ոսկեղէն սափորի մէջ, որ շնորհել է քեզ արգու մայրդ»։

«Ո՞չ. ընկեր իմ սիրելի», գոչեց Աքիլ. «Երդվում եմ լրիւ կստարել, ինչ որ ինձ պատուիրեցի՛ք. Բայց ե'կ հուպ, մօտեցիր ինձ, որ վերջին անգամ գրկախառնուի՛նք»։

Նա սիրալիր բազուկները կարկառեց, բայց ուրուն յանկարծ անհետացաւ և շշելով գետին իջաւ։

Աքիլլեսի քունը փախաւ, և նա նորից սկսաւ ողբար Պատրոկլին։ Նրա կոծից Միրմիդներն էլ զարթեցան։ (Եր. 214)։

«Այն ինչ Աքիլ յուո նստած էր վրանի մէջ. ընթրիքի մնացորդները գեռ սեղանի վրայ էին։ Յունաց դիւցազներից երկուքը՝ Աւտամնդոն և Ալկիմոս, նստած էին մեկուսի և չեին խօսում, որ մասյլաղեմ իշխանի մտածմունքը շխանգարեն։

Ալեղարդ ծերունին անտես մտաւ վրանը, Աքիլլեսի առջեւ ընկաւ, ծնկերն զրկեց և ձեռքերը համբուրեց։

Մի քանի վայրկեան երկուքն էլ հիացմամբ և ապշութեամբ իրար վրայ նայեցան. ապա թէ Պրիամ սկսաւ աղերսալից ձայնով ասել.

Յիշեր հօրդ, գիցանմանդ Աքիլլես, տարիքով ինձ հաւասար ծերունի հօրդ, որ զառամութեան շէմքի վրայ է գտանվում, Գուցէ նու էլ այժմ դրացիներից նեղուած է, և մարդ չունի, որ օգնէր իրեն վատանգի մէջ։ Սակայն նա գոնէ քեղնից լուր ստանալով սփոփում է, և յրւսով է տեսնել որդու վերադարձը։ Բայց եղուկ ինձ թշուառիս։ Ամենաքաջ որդիներիս ուազմը տարաւ։ Միայն Հեկտորն էր ինձ մնացել, որպէս սփոփիչ, Հեկտոր որ ամենքիս պաշտպանն էր։ Բայց ահա դու նրան հանդիպեցար, և մեր երկրի վերամարտկին սպանեցիր։ Ո՛չ, առ միշտ կորաւ նա մեղ համար։ Եւ ես ահա եկել եմ, ամբաւ փրկանք բերելով, որ մարմինը քեղնից թափեմ։ Ո՛չ, ակն ածիր աստուածներից, Աքիլլես, և գթա ինձ, հօրդ յիշելով։ Ես առաւել եմ կարեկցութեան արժանի, քան թէ նա։ Կմ կրած վիշտը դեռ ոչ մի մարդ չէ կրել, զի ահա համբուրում եմ որդուս սպանող մարդու ձեռքը։

Այս խօսքերից հօրը տեսնելու մի տրտմագին կարօտ զգաց Աքիլլես, և և մինչ Պրիամ նրա ոտքերի տակ թաւալուած լաց էր լինում, ինքն էլ փղձկաց դառնապէս, Պելլեսին և Պատրոկլին յիշելով։ (Եր. 247)

* *

Այժմ գանք յեր նկատողութիւններին։

(Եաբանակելէ)

Միաբան

ԱԶԳԱՅԻՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԺԵՄԱՐԵՆԻ ՄԵՋԻ ԱԹՈՒԱՅ Ս. ԷՀՄԻԾԵՆԻ

1886—87 ուս. ամի

1886-ի Սեպտեմբերի 14-ին՝ Խաչվերացի տօնի օրը՝ հրամանաւ Նորին Սրբութեան Գել. Տ. Մկրտիչ Արքեղիսկոպոսը, զինի Ա. Արիստակէս եպիսկոպոսը կարդաց Վ. Հ. Հայրապետի սրբածուածակը, որով ես վերակազմում էի ճեմարանիս տեսչութեան պաշտօնին։